ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2015թ. փետրվարի 4 -ին կայացրած նիստի

Նիստի մասնակիցում են հանձնաժողովի 7 անդամներ:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր տրամադրելու խնդրանքով << Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց՝

Վայք քաղաքի բնակիչներ Ռոբերտ Ասլանյանի,Վաչիկ Կարապետյանի, Օֆելյա Թովմասյանի, Գետափ գյուղի բնակիչ Արմենակ Խաչատրյանի, Եղեգնաձոր քաղաքի բնակիչ՝ Սվետլանա Սարգսյանի դիմումները ուղղված << Վայոց ձորի մարզպետին՝ առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու խնդրանքով:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Ելնելով առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու համար ներկայացված փաստաթղթերից և բժշկական ցուցումներից Վայք քաղաքի բնակիչներ Ռոբերտ Ասլանյանին, Վաչիկ Կարապետյանին, Օֆելյա Թովմասյանին, Գետափ գյուղի բնակիչ Արմենակ Խաչատրյանին պետական պատվերի շրջանակներում տրամադրել <<Ջերմուկ>> առողջարանի, իսկ Սվետլանա Սարգսյանին և դստերը՝ Սրբուհի Մելքոնյանին <<Արարատ>> մանկական առողջարանի ուղեգիր:

Հանձնաժողովի նախագահ Հ.Սարգսյան

Քարտուղար Ց.Բաբայան

04. 02. 2015թ